ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 24.12.2020թ. «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները՝ «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողների հետևյալ թափուր տեղերի համալրման վերաբերյալ՝

- **Ձեռներեցություն - 288 ժամ**
- **Ֆիզկուլտուրա - 708 ժամ**
- **Ամոքիչ խնամք - 36 ժամ**
- **Ձուլման գործ - 72 ժամ**
- **Դեղագործական քիմիա - 90 ժամ**

Մրցույթն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին, քոլեջի կողմից նախապես կազմած բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային / մոդուլին/ և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին կարող են մասնակցել `

Մասնագիտական առարկաների դասավանդման դեպքում այն անձը, ով ունի տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին համապատասխան մասնագիտություն՝ մասնավորապես դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1/ Դիմում /Ձև1/

2/ կրթության մասին հավաստող փաստաթղթեր/ դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը/

3/ անձնագիր /բնօրինակը և պատճենը

4/աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք / առկայության դեպքում/

5/ ինքնակենսագրություն /Ձև 4 /

6/ մեկ լուսանկար՝3x4 չափի.

7/ այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8/ Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկը /բնօրինակը և պատճեն/,

9/ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության օրվանից մինչ սեպտեմբերի 4-ը ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. սեպտեմբերի 9-ին «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Հաշտ. Գավառ, Նալբանդյան 91/1, բջջ. +374 33 02-62-30